

ԿՈՉԷՆ ԳԻՒՂԻ ԱԽԵՐՈՒՄԸ

(Շարունակութիւն)

Կօճափոխութեան փորձերը: Ախուցդին հրաւիրելը: Կօճափոխ հայերը մեշիզում: Գաղսնի դեսպան դեսպի Շամազդին: Կազակների գալուստը: Կոզեցիները Թիֆլիզում: Գեներալ Լեցկու հեռագիրը Կոզեցիների մասին:

Գ.

Երբ թուրքերը իսպառ աւերեցին Կըռդէնը, և ամեն տեսակ կողոպուտ տարան տեղաւորեցին կամ անհետացրին և հողեպէս հանգստացան ու ազատ չունէ ջաշեցին... աշուհեաւ սկսեցին մտաբերել իրանց գերի հայերին, սկսեցին հողալ նրանց վիճակի մասին: Գերի գնացած հայերը հինգ շաբաթ մնացին թուրքերի ձեռքում:

Նրանց կեցութեան մասին Բողաղանլիում և Ղարախանլիում մանրադնին տեղեկութիւնները ափսոս որ պակասում են, բայց Թիֆլիզում Կըռդէնցոց կցկտուր պատմածներից երևում է թէ ինչ հողեկան և ֆիզիքական տանջանքներ են կրել նրանք գերութեան օրերում և մանաւանդ ըստօրհայտան տանջանքներ, որոնց մասին հողոյ խորքիցմեծ դժկամութեամբ տկնարկներ էին անում, ասելով, «մեր ցաւը ծով է, անյատակ ծով, մեր արտասուքը ծովի ջրի պէս աղի»:

Թուրք կոմիտեաների անդամները շարունակ շրջում էին թուրք գիւղերը և տեղեկութիւն էին ժողովում գերի պահուած Կըռդէնցիների մասին և այդ տեղեկութիւնները հասցնելով կոմիտեաներին, նրանցից հրահանգներ էին ստանում և նրանցով ղեկավարւում:

Ահա մի օր այդ գաղան «ջամբեզարները» կամ կոմիտեան անդամները, ոմանց Բողաղանլիուցոնց հետ գաղանի խորհրդի կանգնեցին թէ ինչպէս վարուեն աշուհեաւ գերի Կըռդէնցիների հետ: Նրանք այն միտքն էին յայտնում, որ այդ գերիները անտէր անտիրական մորդիկ են, ահա այսրան ժամանակ ինչ որ աւերուել է Կըռդէնը, ոչ որ գրսից չի գալի, ոչ որ օգնութեան չի հասնում և ոչ էլ պրիստաւը գիտէ որանց տեղը... Ուրիշ տեղերում այդպիսի հայերին առաջարկում են մուսուլման դաւնալու, եթէ չգարձաւ՝ սպանում են, ինչի համար մնայ աշխարհիս երեսին, աշուհեաւ հայ

չպէտք է լինի․․․ Ուրեմն առաջ նրանց աչքը վախեցնենք զընդահով, գլուխը քարը թէ շներեց մինը կպակասի, յետոյ առաջարկենք մուսուրման դառնալու։

Վճիռը կայացու, հետեւեալ օրը երեկոյեան դէմ դուրս եերին մի քանի նշանաւոր Կռքէնցիներ, որոնց թուում է ծերունի Սօսինին։ Վերջինիս կանգնեցրին և երեք գնդակ արձակեցին նրա վերայ սրտի մէջ ահ ձգելու և միւս ընկերների վերայ ստրաստի աղղելու նպատակով։ Նրեք գնդակից մինը անցաւ Սօսինի հագուստի միջով․․․ Յայտարարեցին միւս Կռքէնցիներին էլ թէ ըստրին էլ պէտք է կոտորեն․․․

Այդ սրտուամբ յայտարարելուց յետոյ սուգ ու շիւանն ընկաւ Կռքէնցիներին մէջ, լաց ու հեկեկանքին վերջ չկար․․․ Տեսարանը սրտաճիւղի էր։ Իբր անյաջող գնդակահարումից յետոյ խաժամուժ ամբողջ միաձայն առաջարկեց Սօսինին, Սարգսին և Բէգվերդին ընդունել մահմետականութիւն, յուսալով որ եթէ այդ երեքը ընդունեն, միւսներն էլ անպատճառ կհամաձայնեն։

Պահանջող բողոքութեան մէջ մասնակից էին շատերը Բողաղանլի, Զլովդարլի, Ղալաղանլի, Սամաղբայլի, Ալիմարգանդալի, Մանսուրլի և այլ գիւղերի ընակիւններից, որոնք ուրախ կլինէին, եթէ հայերը կրօնափոխ լինէին և իրանց կեանքը ազատէին կառաղի ջանքեղարներից, որոնցից վախենում էին նոյնիսկ ոչ ջանքեղար թուրքերը։

Մահուան սարսափը մի կողմից, զրոյի օգնութեան քաջակալութիւնը միւս կողմից հարկադրեցին երեք պատուաւոր հայերին և նրան համադիւղացիներին առ երես հաւանութիւն տալ կրօնափոխ լինելու։

Լուրը խտառոյն արագութեամբ տարածուեց թուրքերի մէջ, ուրախութիւն և ցնձութիւն արտադրեց, և իսկոյն հրաւիրակի գնաց Ախրաշ ակունդի մօտ, որ իւր հետ առնելով հաջի մօլլա Սէօուենին և Գեալբալա Մխունդին, շտապեց գալ բաղմութեան ժողովատեղին։ Կնքադոհ սրտով, քողցրածպիտ գէմբով մօտեցաւ կրօնապետան իւր ընկերներով հանդերձ, որպէս զի մի քանի ծէսեր կատարի նորադարձների վրայ։

Ահագին բաղմութեամբ շրջապատուած գնում էին դէպի մէշիղը Սօսին, Սարգսին ու Բէգվերդին։ Մէշիղում Սօսին անուանուեց Սուլթան, Սարգսինը—Մամմադ և Բէգվերդին—Բէգւլար, ածիւնցին նրանց գլուխներն ու ծնօտի աակը, խուզեցին բեկամէջը և հինա դրին մօրուսների և եղունգների վերայ։ Մեծ ցնձութեամբ դուրս բերին մէշիղից գիւղամէջ և յայտնեցին բաղմութեանը, որ այս հայերն արդէն իրանց կրօնակից

եղբայրներն են և մ'նայցած հայերն էլ դարնանք կենթարկուեն
սիւնն աշխի (թշվառութեան):

Արօնափոխութեան հարցը վերաբերում էր հայերի միայն
մի մասին, որ զեանդուած էր Բողազանլիում: Բայց առաւել
մեծ մասը ցրուած է այլ զանազան գիւղերում: Ուստի վեր-
ջիններէս լիճակը և անելիքը դեռ ևս յայտնի չէր: Գուցէ նրանք
կրօնափոխութեան միտքը մերժեն և այլն: Ուստի երես առ-
երես կրօնափոխները հոգեպէս չհանգստացան և ընկան աւելի
մեծ մտաւորանքութեան մէջ, որովհետեւ նիւթական կարողու-
թիւնն զրկուած, կրօնափոխութեամբ էլ խայտառակուած,
նրանք այնուամենայնիւ ապահովուած չէին համարում իրանց
և համագիւղացիներէ կեանքը: արտաքին կողմից էլ օգնութեան
յոյսը կորցրին 5 շաբաթ գերութեան մէջ գեղերելով: . .

Ընդհանուր լիճակի մասին մտածելու և հոգալու բա-
րոյսպէս պարտաւոր էին կրկին այդ երեք կրօնափոխ եղած-
ները, ըստ որում գիւղի իշխանները նրանք էին, ամենքը նրանց
էին նայում և լսում: Իսկ նրանք աւելի մեծ խայտառակու-
թիւնները և արհաւիրքները դեռ ապագայումն էին սպասու-
մ: Եզրակացնելով, որ Կադէնի ճակատագրի մասին արտաքին հայ
աշխարհը տեղեկութիւն չունի, դադանի խորհրդակցութեամբ
այդ երեքը և գուցէ միւս համագիւղացիները վճռեցին ու-
ղարկել գիւղեր ժամանակ մի պնդագետպան դէպի Շամշադինի
մօտիկ հայ գիւղերը տեղեկութիւն տալու:

Այս նպատակի համար ընտրեցին մի վստահ և ճարպիկ
երիտասարդ: Կեանքի կողմից անդէն հայ մարդու համար չա-
փազանց վտանգաւոր էր այս գաղանի ճանապարհորդութիւ-
նը, որովհետեւ պնդագետպանը պէտքէ անցնէր այն հողերով, ուր
երկաթուղու աջ ու ձախ ընդարձակ տարածութեան վերայ
ոփուում էին թուրք գիւղերը և հերոսակախմբերը և դրանց
միջով պէտքէ աներեւոյթ կերպով սողար, գնար վստահ պըն-
դագետպանը: Մինչև անդամ թուրք փականքն այդ միջոցին
կռիւ էր մղում Շամշադինու հայ գիւղերի դէմ:

1905 թուականի զեկտեմբեր ամիսն էր. Կուրի դառնա-
շունչ հիւսիսային քամի, մութ ամպամած երկինք, լուսնի
նորման շրջանն էր: Բողազանլին գիւղերային մառախուղով
ծածկուած էր: Շներն անգամ չէին հաջում: . . Գաղանի ճա-
նապարհորդը քրիստոնէաբար խաչ քաշեց երեսին, նայեց
իւր շուրջը. ե ուրուականի նման, մի ակնթարթում աներե-
ւութացաւ վարելահողերի մէջ: Թողեց նա վտանգաւոր հասա-
րակաց ճանապարհները և ընկաւ խոր, բայց ցամաք, ջրանցքներ
մէջ: Նա գնում էր շնչառաւ և մտածում իրան տուած

բերանացի հրահանգի վերայ. . . Մերթ կանգնում էր ջրանցքի մէջ և գլուխը զգուշութեամբ բարձրացնելով նայում էր իւր շուրջը գետնի հորիզոնով, որ աւելի լաւ նշմարի հեռուից մարդկային ստուերը. . .

Ամենուրեք գերեզմանի լռութիւն է, ոչ մի ստուեր գետնի մակերևոյթի վերայ չերևաց: Պնդադեսպանը նորից շարժուեց ընդառաջ ու նորից ընկաւ իւր խորհրդաւոր մտածմունքներին մէջ:

«Շրիւք» յանկարծ լսուեց խոսքերի մէջ մի շխշխոց և մի կողմի վրայ անհետացաւ: Պնդադեսպանը առանց ցնցուելու ըրպէսչափ կանգառաւ և մտքումն արտասանեց, «գնձ, կորի, անպիտան նապաստակ, դու ինքդ վախկոտ ես և ինձ չես վախեցնել և շարունակեց իւր ճանապարհը:

Ահա դէմ ելաւ երկաթուղու գիծը, քիչ հեռու երեսում է «Թովուզ» կայարանը, սւր լապտերներն աղօտ լոյս են տարածում: Հանգստութեամբ անցաւ գիծը և ընկաւ Ոքիւղլու թրքարն կ'գիւղի սահմանները: Թեքուելով ապահովութեան նպատակով դէպի լեռնոտ կողմերը՝ պնդադեսպանը անվտանգ անցաւ թրքարնով վտանգաւոր սահմանները և ընկաւ հայ գիւղերի սահմանները:

Առաւօտ էր. նամշահինու «Կարմիր Աղբիւր» հայաբնակ գիւղը դրած էր Կըռզէնի պնդադեսպանի առաջ: Նրա կտուրների ծխնելոյղներից դուրս էր գալի սիւնանման ծուխ և ցրում օդի մէջ: Ձիւնը պատել էր շրջակայ լեռների բարձրութիւնները: Տեղ տեղ մարդիկ խմբուել էին և խօսում էին իրանց նախապատրաստութիւնների մասին թուրքերի յարձակման դէմ: Այդ տեղ էր և գիւղի քահանան որին անմիջապէս դիմեց Կըռզէնի պնդադեսպանը և պատմեց ամենայն ինչ. Շրջապատեցին ներկայ եղողները:

Կորն ստանալուն պէս իսկոյն մի կերպով ուղարկուեց Թիֆլիզ մի այլ պնդադեսպան «Կարմիր Աղբիւրից», որ իրերի գրութիւնը յայտնի սւմ հարկն է, որի հետեանքը եղաւ այն որ Փոխարքայի օգնական գնեւերալ Մալամայի կարգադրութեամբ և հրամանով եկաւ փոխնորսաւուլ Բրեանցեր 100 կադակներ հետ և 1905 թուականի դեկտեմբերի 28, չորեքշաբթի օրը մտաւ Բողաղանլի գիւղը:

Սպայ Բրեանցիի դալը Բողաղանլուեցոց համար մի անապատի գէպը էր. իսկ գերի հայերի համար փոքր ինչ հասկանալի էր: Այդ պատճառով, սկզբում, Բողաղանլուեցիք ընկան շփոթութեան մէջ, դողն ընկաւ նրանց սրաների մէջ, կարծեցին թէ Կըռզէնի աւերումը պէտքէ պահանջին նրանցից:

Առժամանակ պահեցին թուրքերը խորհրդաւոր լռութիւն և հնազանդ պատրաստականութիւն ամէն մի պահանջին: Ակնածութեամբ սպասում էին թէ ինչ կ'ընէ այս նորեկ ռուս հիւրերից...

Հետեալ օրը Բրեանցներ հաւաքեց Բողաղանլուի հասարակութիւնը և նրանց առաջ պարզեց զալտեան բուն նպատակը խնդրելով որ գերի հայերին յանձնեն իրան... Խնդրելու ձևը արդէն զգաստացրեց թուրքերին, որ սովոր էր հրամանի և ոչ խնդրի: Վստահութեամբ պատասխանեցին թէ — այս տեղ ըստը թուրք են, հայ չկայ... եղած հայերը արդէն թրջացել են... և բացասեցին փոխ ետաւուին...

Բրեանցներ ժողովեց հայերին և թուրքերի ներկայութեամբ առաջարկեց նրանց թէ կամենում են արդեօք գնալ իւր՝ Բլեանցեի հետ, թէ մնալ Բողաղանլու: Հայերը հայեացքը խոնարհեցրին և առանց պատասխանի թողին: Բայց երբ Բրեանցներ առանձնացրեց հայերին և նոյն հարցն առաջարկեց հայերը միաբերան պատասխանեցին հետեւեալը:

«Մենք ահաբեկուած ենք թուրքերից, և դեռ հաւատացած չենք որ դուք արդարեւ եկել էք մեզ ազատելու... ձեզ՝ իբրեւ քրիստոնեայի աղերսում ենք որ ազատէք մեզ այստեղից... իսկ եթէ անհնարին է անել, այն ժամանակ դուք ձեր ձեռքով մեզ գնդակահար արէք և մի թոյնէք թուրքերի ձեռքում:

Հայերի խոստովանութիւնից յետոյ Բրեանցներ կազմեց հէնց այդ տեղ մի արձանագրութիւն, որի մէջ յիշատակեց այն հանգամանքը որ հայերը Բրեանցների առաջարկին, թուրքերի ներկայութեամբ չեն պատասխանել, իսկ առանձնացրած ժամանակ ասել են վերոյիշեալ խօսքերը: Բրեանցներ հայերի խօսքերից մտցրել է նոյն արձանագրութեան մէջ և կըռզէնը աւերող խուժանի հետեւեալ պարագլուխների անունները, Սարի Աստաքերըւա Օվլի օղլի՝ Բողաղանլուեցի, Մարդան Մարդան օղլի և Աբալար Թանդրիկուլի օղլի՝ Զլուղարլուեցիք, Շամիլ Մամմադ առադ օղլի և Վալի Բահար օղլի՝ Ալիմարդանլուեցիք: Շամշադինու քահանան նրանց վերայ աւելացնում է և վաճառական Հաջի Ամիլ խանին: *)

Վերջ սպէս 1905 թուի վերջին օրը այսինքն դեկտեմբերի 31ին, չաբաթ օրը, միայն 120 հոգի կըռզէնցիներ մերկանդամ ոտաբորիկ, նիհարացած, ընկճուած, մեծ մասը կանաչ ու մատաղահաս երեխայք, փոխ-ետաւուլ Բրեանցների հովանաւոր-

*) Մ. Կ. 1906 թիւ № 65

ութեան տակ հասան «Թովուզ» կայարանը»• իսկ 108 հոգի և աւելի հայեր մնացին Թուրքերի ձեռքում:

Ահա եկաւ Բաղուից մարդատար գնացքը, որի ճանապարհորդները մեծ հետաքրքրութեամբ էին նայում Կըռզէնցոնց վերայ, որոնք ըստ ըստին հայի տպաւորութիւն չէին տալի այլ կատարեալ թուրքի, հազուադէպ թրքաձեւ, գլուխները ածիւած, մորուսներն ու եղբայրները հին աշու ներկած և այլն: Բոլոր թրքանման այդ Կըռզէնցիներին գնացքը տարաւ Թիֆլիզ:

Այս առաջին բաժինն էր Կըռզէնցիներից, որ հասաւ Թիֆլիզ: Միւս բաժինը, որ Թուով պահպան չէր առաջինից, մնացել էին Թուրք գիւղերում ցրուած և սպասում էին ազատութեան: Ահա սրանց մասին է որ Կըռզէնցի Սոսո և Յովհաննէս Մայիլեանցները, իրանց համագիւղացիների հետ Թիֆլիզ հասնելուց յետոյ, հեռագրով գիմնցին պրիստաւ Եփիմովին և սա 1906 թուի Յունուարի 9 պատասխանեց հեռագրով թէ «գերիները ողջ են, սպասում են կազակների նրանց տգատելու համար»:

Պատմութեանս ընթացքը ցոյց է տալի, որ այնուհետև Թուրքերի մօտ մնացած Կըռզէնցիները, զանազան միջոցներով, հետզհետէ, հաւաքւում են Թիֆլիզ: Օրինակ՝ 1906 թուի փետրուարի 1ին Թիֆլիզ հասան գերի Կըռզէնցիներից 3 հոգի, Ջհան Ալէքսանեան, Խաչատուր Աւագեան և Մկրտիչ Մայիլեան: Սրանք մի քանի Թուրքերի հովանաւորութեամբ և դադանի առաջնորդութեամբ, Թուրք հասարակութիւններից դադանի կարողացել են հասնել Թովուզ կայարան և այնտեղից Թիֆլիզ:

Այս նորեկների վկայութեամբ, գերութեան մէջ գեռ ևս մնացել էին 111 հոգի, ցրուած զանազան Թուրք գիւղերում, այն է Բողազանլիում, (20 հոգի), Մանսուրլիում, Ղարախանլիում և Խաթունլիում: Կրկին սրանց վկայութեամբ, գերեւորահ Թուրքերի դուր թիւնը խիստ վատթարացել է և այդ Թուրքերը դո՛հ կմնային՝ եթէ գերի հայերը մի կերպ ազատուէին և իրանցից հեռանային, որովհետև գերեւորահները խնամելով հայերին և նրանց կեանքը իրանք՝ էին ենթարկւում կասկածի և վրէժի Թուրք ռազմիկ խմբերի կողմից, յունուար ամսում շարունակ հայերին էին որոնում Թուրք գիւղերում, սպանելու նպատակով: Իսկ գերեւորահները այդ չէին ցանկանում և իրանց անձը վտանգի ենթարկելով, կարելոյն չափ աշխատում էին թաղցնել հայերին ռազմիկներից և չմասնել նրանց ձեռքը:

Այդ պատճառով հայերից ոմանք թագնւում էին խոտերի մէջ, ոմանք հորերի մէջ, ոմանք մի այլ յարմարին տեղ: Խաչատուր Աւագեանի վկայութեամբ սրա պահապան Թուրքը իւր

սեպհականութիւնից լիողով կաշառում էր ռազմիկներին, որ իրանից հայ չափահանջեն: Այս իրողութիւնը Կըռզէնի շուրջը կատարուում էր այն ժամանակ, երբ ընդհարումները խաղաղացնելու նպատակով Ղազախ ուղարկուած զինուորացիները լինելու իւր թնդանօթներով, 1906 թուի յունուարի 29ին ցոյց էր կատարում խճուղու երկարութեամբ Ղազախ քաղաքից մինչև Քանվանսարա գիւղը, ուր ամեն բան խաղաղ էր:


Սրանից յետոյ նոյն զինուորացիները լինելու ժամանակ 1ին հեռագրեց Թիֆլիզ թէ «Ղազախի գաւառում զբուծիւնն անվտանգ է. Քարվանսարայիները շրջում են Ղազախում. Կըռզէնցիները ցրուած են աները քանդած լինելու պատճառով. յունուարի 23ին առաջարկուած է ցանկացողներին գաղթել: Նոյն օրը, ժեմերուարի 1ին, հեռագրել է նաև բժշկապետ Յակոբեանցը «114 Կըռզէնցիներին աղատելու համար կարգաւորուած է, վաղը գնում եմ Շամշադին:» *)

Ապա ժեմերուարի 6ին, ինչպէս հեռագրուած էր Թովուզից (Մշակ 906 թ. №29 ժեմեր. 3) այդ կայարանն էին բերուել Թիֆլիզ գնալու էլի 24 հոգի Կըռզէնցիներ, վերջապէս ժեմերուարի 11ին Թովուզ կայարանն են բերուել Կըռզէնցիների վերջին մնացորդը 111 հոգի հայեր, 32 երեխաներով նրանց հետ և այդ հայերը, հեռագրի ասելով, «ուր են եկել Խաթունլի, Մանսուրլի և Բողաղանլի գիւղերից:» **)

Թէ ինչպէս ում կարգադրութեամբ և հովանաւորութեամբ հայերը հասան երկաթուղու կայարանը, այդ մասին տեղեկութիւնները պակասում են: Միայն վերը յիշած հեռագրներից յայտնի է այն, որ բոլոր Կըռզէնցիները հաւաքուեցին Թիֆլիզ: Այժմ տեսնենք նրան վիճակը Թիֆլիզում և նրանց հեռանալը Թիֆլիզից:

(շարունակելի)

Քաջբերուցի.



*) Յառաջ 1906 թ. №17 ժեմերուարի 4.

**) Յառաջ 1906 №24.